**Հաստատում եմ՝**

**Տնօրեն՝ Ա.Նահապետյան**

Digitally signed by NAHAPETYAN AREVIK 7007690092
Date: 2022.09.30 13:10:51 AMT

01**.09.2022թ.**

# Հայոց լեզվի և գրականության մեթոդմիավորում 2022 - 2023 ուստարվա ծրագիր

Մեթոդմիավորման
նախագահ՝ Շ. Կուրղինյան

| ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԿԱԶՄԻ ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՂՅՈՒՍԱԿ | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Թիվ | Ազգանունը, անունը, հայրանունը | Ծննդյա նտարե թիվը | Կրթու թյունը | Որակա վորումը | Ստաժ ը | Ի՞նչառարկաէդ ասավանդում | Դասավանդվող դասարանները | Շաբ աթ. ժամ երը |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 1 | Շ. Կուրղինյան | 1962 | Բարձ. | հ.լ.,գր., ուս. | 39 | հ. լ.,գրակ., մայրենի | 6-րդ, 9-րդ | 12 |
| 2 | Հ. Գրիգորյան | 1965 | Բարձ. | հ. լ.,գր. ուս. | 34 | հ.լ.,գրակ. | 8-րդ,9-րդ | 10 |
| 3 | Մ.Նավասարդ յան | 1967 | Բարձ. | հ. լ.,գր. ուս | 34 | հ. լեզու,գր. մայրենի | 6-րդ,8-րդ | 12 |
| 4 | Ն. Վահանյան | 1966 | Բարձ. | հ. լ. ,գր. ուս | 33 | հ. լեզու,գր. մայրենի | 5-րդ,7-րդ | 12 |
| 5 | Մ.Խաչատրյան | 1975 | Բարձ. | հ. լ. ,գր. ուս | 24 | հ. լեզու,գր. մայրենի | 5-րդ,7-րդ | 12 |
| | | | | | | | | |

Նիստ 1
Օգոստոսի 31

1. Ուսուցիչների դասաբաշխումը: Մեթոդմիավորման կազմը:Հայոց լեզվի, գրականության առարկաների մ/մ 2022-2023ուստարվա աշխատանքային պլանի ներկայացում և քննարկում /զեկուցող՝ Շ. Կուրղինյան/:
2. Մայրենիի, hայոց լեզվի և գրակ. ծրագրերի ստուգում և հաստատում՝ըստ պետական ծրագրերի և չափորոշիչների: Դպրոցական պարտադիր բաղադրիչի բաշխում:
3. ԿԱՊԿՈՒ սովորողների ԱՈՒՊ-ների քննարկում:Օրվա դասապլան:
4. Ուսումնական ծրագրեր, դասագրքեր,մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, տետրեր:
5. Բանավոր հարցումները, թեմատիկ և գործնական աշխատանքները կիսամյակի ընթացքում:Բաց դասեր, մանկավարժական ընթերցումներ, զեկուցումներ:

Նիստ 2

Հոկտեմբերի 12

1. Թեմատիկ գրավոր աշխատանքների կազմում:
2. Թեմատիկ գրավորների տետրերի, բառատետրերի , գրականության տետրերի և օժանդակ տետրերի ստուգում:
3. «Համագործակցային ուսուցում» (զեկուցող՝ Հ. Գրիգորյան):
4. 2023-2024 ուստարվա նոր ծրագրերի չափորոշիչների և դասագրքերի ուսումնասիրում և քննարկում:
5. «Գռեհկաբանությունները և ժարգոնները աշակերտների բառապաշարում» (զեկուցող՝ Շ. Կուրղինյան):

Նիստ 3
Նոյեմբերի 25

1. Նախորդ ամսվա աշխատանքների քննարկում:
2. Հայոց լեզվի դրվածքի ուսումնասիրում 7-րդ դասարանում: Փոխադարձ դասալսումներ և քննարկումներ:
3. Դասարանական փոքրիկ միջոցառումներ՝ նվիրված Եղ. Չարենցի 125-ամյակին/բոլոր ուսուցիչները/:
4. «Ձևավորող գնահատում» (զեկուցող՝ Մ. Խաչատրյան):
5. Վայելչագրության մրցույթի անցկացում:
6. 2023-2024 ուստարվա նոր ծրագրերի բափորոշիչների և դասագրքերի ուսումնասիրում ու քննարկում:
7. Դասախոսություն՝ «Գրիգոր Նարեկացու աշխարհընկալումը» (կատարող՝Ն. Վահանյան):
8. Ուսուցչի մասնագիտական չափանիշները: Հայոց լեզվի օլիմպիադայի դպրոցական փուլի նախապատրաստում:

Նիստ 4
Դեկտեմբերի 23

1. 1-ին կիսամյակի աշխատանքների քննարկում և վերլուծություն:
2. Փոխադարձ դասալսումներ և քննարկումներ:
3. «Մարդը և բնությունը Սահյանի ստեղծագործություններում» (զեկուցող՝ Մ. Նավասարդյան ):
4. Պատի թերթի լույսընծայում՝ «Ո՛չ՝ պատերազմին» (բոլոր ուսուցիչները):
5. Օլիմպիադայի արդյունքների վերլուծություն և քննարկում:
6. Մեթոդմիավորման և տնօրենության կողմից տրված գրավոր աշխատանքների վերլուծություն:1-ին կիսամյակի թեմատիկ ծրագրերի կատարողականի ստուգում:

Նիստ 5
Հունվարի 25

Հարցում 5-9-րդ դասարանների աշակերտներին «Ի՞նչ ժանրի գրքեր եմ սիրում կարդալ և ինչու՞»:

1. 2-րդ կիսամյակի թեմատիկ պլանների քննարկում:
2. Լեզվական ոճեր. վարչական ոճ:
3. Նախապատրաստական աշխատանքներ Մայրենիի օրվա կապակցությամբ:Բաց դասեր, միջոցառումներ:
4. Օլիմպիադայի տարածքային փուլ անցած աշակերտների հետ լրացուցիչ պարապելու հանձնարարություն:

Նիստ 6

Փետրվարի 22

1. Նախորդ ամսվա աշխատանքների քննարկոմ:
2. Մայրենի լեզվի և Գիրք նվիրելու օրվան նվիրված աշխատանքների վերլուծություն:
3. «Լույսը Մեծարենցի ստեղծագործություններում»(զեկուցող՝ Մ. Խաչատրյան ):
4. Մեթոդների ուսուցում. բանավեճ:
5. Գրականության դրվածքը 8-րդ դասարանում:
6. Փոխադարձ դասալսումներ:

Նիստ 7
Մարտի 22

1. Նախորդ ամսվա աշխատանքների ամփոփում և քննարկում:
2. Գրականության դրվածքը 9-րդ դասարանում:
3. Գարնանային տրամադրությունը գրականության մեջ:
4. Պատի թերթի լույսընծայում՝«Մեզ չեն կարող ջնջել»խորագրով:

5. Բաց դասերի  կազմակերպում  ։
6.

Նիստ  8
Ապրիլի 25

1. Նախորդ  ամսվա  աշխատանքների քննարկում։
2. Ուսուցման իմ փորձից. «Կապերի իմաստային առանձնահատկությունները»/զեկուցող՝ Հ. Գրիգորյան/։
3. «Ապրիլյան ողբերգությունը կրող գրական մշակները » (զեկուցող՝  Ծ. Կուրղինյան)։
4. Բաց  դասի  կազմակերպում 7-րդ  դասարանում։։
5. Ուսուցման մեթոդներ. Վենի դիագրամ։

Նիստ 9
Մայիսի 26

1. Լրացուցիչ աշխատանքներ հայոց լ. և գրակ. գրավոր և բանավոր քննությունների կապակցությամբ։
2. 2-րդ կիսամյակի ծրագրերի կատարողականի ստուգում։
3. Տնօրենության կողմից տրված աշխատանքների  արդյունքների ամփոփում։
4. Ամառային հանձնարություններ։

Նիստ 10
Հունիսի 30

1. 2022 -2023  ուստարվա կատարած աշխատանքների տարեկան հաշվետվություն։
2. Պետական ավարտական քննությունների ամփոփում։

Առարկայական մեթոդական միավորումները ստեղծվում են նույն առարկայի երեք և ավելի ուսուցիչների առկայության դեպքում:

1. Առարկայական կամ տարրական կրթության մեթոդական միավորումը.

1) քննարկում է հանրակրթական առարկայական չափորոշիչներին համապատասխան ուսումնական ծրագրերի, ուսումնական պլանների նախագծերը, նոր փորձարկվող դասագրքերը, ձեռնարկները, մեթոդական ձեռնարկները և դրանց քննարկումների վերաբերյալ ուսուցիչներին տալիս երաշխավորություններ.

2) քննարկում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի անհատական ուսուցման պլանը.

3) ուսումնասիրում, ընդհանրացնում է մանկավարժական առաջավոր փորձը և այն ներդնում գործնական աշխատանքում.

4) նպաստում է ուսուցիչների որակավորման բարձրացմանը.

5) որակավորման տարակարգ չունեցող սկսնակ ուսուցիչներին նախապատրաստում է ատեստավորման.

6) կազմակերպում է մասնագիտական և մանկավարժական-մեթոդական խորհրդակցություններ, խորհրդատվություններ.

7) ուսուցիչներին հաղորդակից է դարձնում մանկավարժության նորագույն նվաճումներին, կազմակերպում է սեմինարներ, մանկավարժական-մեթոդական ընթերցումներ.

8) սահմանված կարգով կազմակերպում է փորձարկվող դասագրքերի փորձաքննություն.

9) մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամերի տնօրինման վերաբերյալ առաջարկություն.

10) կատարում է ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխում և առաջարկություն է ներկայացնում դպրոցի տնօրենին.

11) կազմակերպում է դպրոցական օլիմպիադաներ, առարկայական մրցույթներ և այլ միջոցառումներ:

2. Տարբեր դպրոցների և ուսուցիչների նախաձեռնությամբ կարող են ստեղծվել միջդպրոցական մեթոդական միավորումներ:

3. Առարկայական մեթոդական միավորումների նիստերը գումարվում են առնվազն յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ: Սահմանված կարգով նիստերն արձանագրվում են: